

—Մեր թագաւորը, նկատելի սրտնեղութեամբ շարունակեց դեսպանը, վերցնում է իր համար միայն մի կին, օրէնքով չի կարող աւելի ունենալ: Մեր բարքերը թոյլ չեն ցոյց տալիս վերահսկիչներ կանգնեցնել ոչ թագաւորի ամուսնուն, ոչ էլ ամենավերջին հպատակի կնոջ վրայ: Դաստիարակութիւնը, բարոյականութիւնը, պատիւը և ընդհանուր կարծիքը—ահա մեր կնոջ Մորուարին:

Բոլոր պարտիկները հռհռացին, և բացականչեցին. «Էհա իլլա իլլ Ալլահ»:

—Ի՞նչպէս, միայն մի՞ հատ կին—հարցրեց վէզիրը զարմացմամբ. էլ ի՞նչ օգուտ ձեզ մօտ թագաւոր լինել: Իսկ երբ այդ մէկ կինը նրան ձանձրացնի, այն ժամանակ ի՞նչ կ'անի:

—Դէ ի՞նչպէս հասկացնել ձեզ մի բան, ինչ դուք անկարող էք հասկանալ: Մեզանում սակաւ չի պատահել որ կանայք թագաւորել են: Ձեր Շահի կինը և մեր թագուհին—նրանք բոլորովին տարբեր էակներ են:

Սակայն՝ դորանում ասուած է.

«Վա՛յ այն ժողովրդին, որին կառավարում է կինը»—նկատեցի ես հեղութեամբ իմ գիտնականութիւնը ցոյց տալու և բարձրաստիճան վէզիրի կարծիքը անհրաժեշտ առարկութեամբ պաշտպանելու նպատակով:

—Եւ այդ երևում է, ասաց վէզիրը, ծանրախոհ, կշռադատելով իր մտքում գործի բոլոր հանգամանքները,—որ ձեր և մեր բարքերի մէջ անհասանելի տարբերութիւն կայ: Մենք կանանց համարում ենք էակներ, որոնք ստեղծուած են տղամարդկանց միմիայն վայելքների և զուարճութիւնների համար: Ըննիսա հարստն լեկում՝ կինը ձեր արտն է, վարեցէք նրան որքան և ինչպէս կամիք, ասաց Ալլահը սրբազան գրքում, և աւելի շատ դուք կը տեսնէք վագրին՝ գառան երկրպագելիս, քան իրանցիներին՝ կանանց ձեռքով կառավարուելիս: Ո՛չ, ո՛չ, Ղզլբաշները հնազանդուում են միմիայն քաջին, նրան, որի թուրը աւելի սուր է և ձեռքը աւելի ուժեղ: «Թ՛ուր, թ՛ուր» բացականչեց նա տաք-տաք, և ձեռքը շարժեց օդի մէջ հորիզոնաբար. «մեզ կառավարողը սուրն է: Աշխարհումս զուլֆակիրից *) լաւ բան չկայ:

—Սակայն յանուն Մարգարէի, ասացէք ինձ, նկատեց Միրզա Ֆիրուզը. ձեր Շահը պէտք է ունենայ հարեմում մի կնկանից աւելի: Նա երևի ունի երգչուհիներ և պարուհիներ, որոնք զուարճացնում են նրան, երբ նա ղայլան է քաշում

*) Մահաժադի յայանի թրի անունը:

և քէֆ է անում. ունի կանայք, որոնք հոգ են տանում նրա հագուստի մասին, կանայք, որոնք ընացնում են նրան հէքեաթներ պատմելով, նրա ննջարանի դռների առաջ ամբողջ գիշերը հսկողուհիներ, սեփական խոհարարուհիներ, անուշեղէն պատրաստող կիներ և սպասուհիներ: Եւ բացի այդ, ինչպէս ինքներդ էք ասում, նա ունի մի գլխաւոր կին կամ հարէմի ըսնու, իսկ սա չէ՞ որ պէտք է աղախիներ ունենայ: Իսկ եթէ ձեր Շահը երեխաներ ունի, հարկաւ երեխաների համար պահւում են բազմաթիւ կիներ, ինչպէս մեր շահադէհների համար. այդ կիները նրանց ծառայում են, նրանց դաստիարակում են, երբեմն էլ գրեւ-կարգաւ են սովորեցնում: Հետեապէս, այդ բոլոր կանանց վարքի վրայ հսկելու համար ձեր Շահը պէտք է ունենայ այնպիսի մարդիկ, ինչպիսին է Մորուարին: Դուք չէք կարող մեզ հաւատացնել, որ իբրեւ թէ ձեր երկրում կանայք այնքան նման չեն մեր կանանց, որ հարկ լինի նրանց վրայ վերակացունել դնելու:

— Զեղ ի հարկէ անհաւատալի կը թուայ: Եթէ ես ասեմ որ իսկապէս մեր կանանց չի կարելի նմանեցնել ձերոնց: Մեզանում նրանք ապրում են առանց որեւէ հսկողութեան, և նոյնքան ազատ են, որքան տղամարդիկ: Մեր թագաւորը, թէև հզօր է, դէպի ինքը՝ իր ժողովրդի կողմից ցոյց տրուած սիրով և պատկառանքով, բայց երբէք չէր վստահանալ փակել իր կնոջ և նրա սպասուհիներին և պահել նրանց այնպէս բանտարկուած ստրկութեան մէջ, ինչպէս Պարսկաստանում: Մեզանում հասարակութեան կազմը, բաշքերն ու օրէնքները դրան ընդգիծադրում են: Ինչ վերաբերում է կանանց բարի վարքի և պատուի վրայ վստահելի և անջնաս վերահսկող գերի պաշտօններին, այդ մեղանում աւելի ևս պակաս է հնարաւոր: Նախ և առաջ մենք այդպիսի մարդիկ չենք էլ կարող գտնել:

— Զէք կարող գտնել, հարցրեց վէզիրը. վարուեցէք ինչպէս մենք. եթէ վէզիրները ի չար են գործ դնում իրանց տըրուած իշխանութիւնը և վստահութիւնը, եթէ ձեր խաներից (նահանգապետներից) մէկը ըմբոստանում է կառավարութեան դէմ, եթէ դատիները անարդար դատաստան են կտրում, մուստֆիները (քարտուղար) կաշառք են վերցնում, դրանց բոլորին Մորուարի դարձրէք: Զեղանում երեւի բաւական շատ կը լինի կաշառակերների թիւը. ահա ձեզ վստահելի վերահսկիչներ ձեր կանանց վրա... իսկ եթէ բան է, այդ էլ չեղաւ, այդպիսի Մորուարի դարձրէք ձեր պատերազմական գերիներին:

Քեաֆուրը գողաց սարսափից, երբ լսեց նորին արդարադատութեան այս բարի խորհուրդները: Նա շատ էր խօսում

իրանց անիծած օրէնքների և բարքերի մասին, և վճռականօրէն ընդդիմադրում էր Մորուարուն Անգլիա ուղարկելու, աւելացնելով թէ, երբ նրա թագաւորը կ'իմանայ ամենամայաղթ Շահնշահի բարեացակամ հոգատարութիւնը անգլիական հարեմները անվտանգ պահելուն մասին, հէնց միայն այդ մտադրութիւնը նա կ'ընդունի այնպիսի շնորհակալութեամբ, ինչպէս եթէ իրագործուած լինէր այն:

Ստրուկներին մերժելով՝ դեսպանը բաւական վիրաւորեց մեր զգացումները, *) սակայն նա, այսպէս ասած՝ դարձմանեց այդ զգացումները նրանով՝ որ՝ երբ նրա աչքն ընկաւ ձիերի վրայ, որոնք պիտի ուղարկուէին Անգլիա՝ մեծ հիացումն արտայայտեց ու յափշտակուեց:

Բարեբախտաբար նա ձիեր ճանաչելու մէջ լաւ դատաւոր չէր, ուստի այն կենդանին, որին մի պարսիկ շատ հաւանականաբար կը մերժէր, կարհամարհէր, նա ուրախութեամբ ընդունեց:

Ինչ պակասութիւններ էլ որ նրանք ունէին, մենք ծածկում կամ կրացնում էինք քաղցրահնչիւն տիտղոսներով: Նրանցից մէկը որ ծածկուած էր չարագուշակ նշաններով՝ կոչուում էր խողաբախշ (Աստուածապարգէ): Մի ուրիշը՝ որ պառաւուրթիւնից օպիտակել էր Մարուարի էր կոչուում, և մի երրորդը՝ որ երբէք թոյլ չէր տալիս որ մէկը դիպչէր իր ականջներին՝ կրում էր Սարմաստ (արբեցող) ծաղրական անունը:

Բացի դրանից կար մի Բագէ, մի Հերոս և մի Սրտակից Բարեկամ—անուններ՝ որոնք բացայայտիչ էին այդ կենդանիների յատկութիւնների համար:

Մտածուած էր այդ ձիերի վրայ աւելացնել և մի փիղ, քանի որ ինչպէս տեսնուում էր, դա օրեկան ահագին քանակութեամբ կերակուր ուտելով՝ մեծ անյարմարութիւն էր պատճառում Շահի գանձարանին. սակայն դեսպանը նկատելով որ այդ կենդանու փոխադրելը նաւի վրայ դժուար կը լինէր՝ ուստի այդ միտքը չիրագործուեց:

Դեսպանը ուրախութեամբ հաւանեց միւս ընծաները: Ինչպէս որ մենք ձիերի մասին էինք գովասանքներով խօսել, այնպէս էլ խօսեցինք մի քանի թրերի ու այլ զէնքերի մասին: Թրերից մէկը կոչուում էր Թայմուրի մտրակ, և մի ուրիշն էլ

*) Պարսկաստանում մի ընծայի մերժումը նախատինք է համարուում, և թագաւոր գլուխների մէջ և պատերազմական կամ թշնամական դիտումների նշան է համարուում:

կար, որի մասին ասուում էր, թէ իսկ այն թուրն էր՝ որով
Նադիր Շահը մուտ գործեց Դէլի:

Մենք ցոյց տուինք մի գեղեցիկ լանջապանակ, սաղաւարտ
և մի պողպատէ բարձապանակ, որպէս մեծանուն Շահ Իսմայէ-
լին պատկանող զրահները: Մի շապիկ ևս ցոյց տուինք, որի
վրայ գրուած է ընտիր կտորներ ղորանից և որը մի ժա-
մանակ հագել էր Շահի հօրեղբայրը—Մեծ Աղա Մուհամմ-
դը իր բոլոր պատերազմների ժամանակ: Այդ շապիկն էլ ու-
ղարկուեց որպէս բարեկամութեան մի յատուկ նշան՝ Շահից
առ իր Անգլիայի եղբայրը, շատ խնդրելով որ նա իր մօի վրայ
հագնէր դրան, ինչ ժամանակ որ պատերազմ գնալու լինէր, ու-
րովհետեւ դա մի հաստատուն թալիսման էր ամեն տեսակ վը-
տանգի դէմ թէ՛ պատերազմի դաշտում և թէ՛ դաշտից դուրս,
այլ տեղում:

Դեսպանը ներհակութիւն չյայտնեց շալերի, փառաւոր
վերմակացուների, չէրաթի կարպիտների, մետաքսների, թա-
ւիշների և ճամկաւոր զիպակների ուղարկուելու դէմ: Նա առանց
դանդաղելու ընդունեց նաև մարգարիտները, յակինթները
և զմրուխտները: Անգլիական թագուհու համար պատրաս-
տուած զգեստը, ինչպէս երեաց, բաւական մեծ զուարճութիւն
պատճառեց նրան: Երբ զգեստը բաց արուեց յատակի վրայ,
ու նա տեսաւ վրան քարեր փակցրած շապիկը և բամբակով
հաստացրած ու երկար ոսկէ դիպակ քաշած վարդիկը, որ
դրուած ժամանակ փայտի պէս ուղիղ կանգնում էր առանց
վայր ընկնելու, նա քահ-քահ ծիծաղեց, և թէպէտ նա հաւա-
տացրեց մեղ, որ իր թագուհին անյարմար կը գտնէր դրանց,
քանի որ Փրանկ կանայքը մերիններից տարբեր ձևով էին հագ-
նուում ափսոսմանայնիւ մեծ յօժարութեամբ նա համաձայնեց
որ դրանք էլ միւս ընծաների թուի մէջ դրուէին:

Սորհրդակցութիւնը այսպէս վերջանալով՝ դեսպանը վե-
րադարձաւ իր տունը, թողնելով մեզ ապշած այն տարօրի-
նակ բաների վրայ, որ մենք լսել էինք ան դարձանալի եր-
կրների վերաբերմամբ, որտեղ մենք շուտով պիտի այցելէ-
ինք:

Գլ. Դ.

Թ՛: Պարսկաստանում արքայական թղթակցութիւնները ինչպէս են կատարուում:—Մի հարազատ նամակ՝ Պարսկաստանի թագաւորի ականջից՝ առ Անգլիայի թագուհին:

Միւս ամենակարեւոր գործը որ պիտի կարգադրուէր այն էր, որ նամակներ պիտի գրուէին Անգլիայի թագաւորին և նրա նախարարներին՝ ի պատասխան նրանց՝ որ բերել էր նրա դեսպանը:

Սա շատ մտածութեան և խորհրդակցութեան առարկայ էր, որովհետեւ երկւոր ժամանակ էր որ մենք նամակ չէինք ուղղել Ֆրանկետանի որևէ թագաւորին, և հետևաբար դժուար էր ստուգել, թէ Տիեզերքի կենդրոնը մի նամակ գրելով մինչև ինչ աստիճան կը վտանգէր իր պատուարժանութիւնն ու վեհութիւնը:

Անգլիայի Շահի դեսպանը, ճշմարիտ է, իր հետ բերած էր մի քանի տարօրինակ ձևով, տարօրինակ գրութեամբ և տարօրինակ կնիշով նամակներ, որոնց ձևն ու կերպարանքը այնքան տարբեր էին մերիններից, ինչքան տարբեր էր դեսպանի ածիլած կզակը *) մեծ վէզրի մօրուքաւոր երեսից:

Մի բան որ ամենամեծ հետաքրքրութիւնը շարժեց մեր մէջ, այն նիւթն էր, որ Ֆրանկները գործ էին ածում իրանց կնիքի համար, և որը մենք կարծում էինք թէ մի տեսակ թանկագին օծանելիք կամ զարդ էր, սակայն Ֆրանկների տուած բացատրութիւնը բոլորովին տարբեր էր մեր կարծածից: Այդ նիւթը դրուած էր մի ոսկեզօծ տփի մէջ և վրան կրում էր մի զարմանալի կամ խորհրդաւոր նշանակութիւն ունեցող դրօշմ, որը ներկայացնում էր մի ձիաւոր՝ մի գազան սպանելիս:

Մեր գիտնականները հրաւիրուեցին դրա մասին բացատրութիւններ տալու մեզ: Ամենամօտ բացատրութիւնը որ նրանք կարողացան տալ՝ այն էր թէ՛ դա ներկայացնում է Բոսթամին՝ երեւի սպիտակ դէին սպանելիս, բայց այս բացատրութիւն, ի հարկէ, մեր խելքին չեկաւ, որովհետեւ Ֆրանկներն ինչ գործ կարող էին ունենալ մեր մեծ հերոսի հետ, և, բացի դրանից,

*) Այս դարու սկզբներում անգլիացիք բոլորն էլ ստփրում էին իրենց երեսները: Մօրուք երբէք չէր տեսնուում նրանց մէջ, մինչև Նքիմի պատերազմից մարտիկների վերադարձը, որոնք մասն Անգլիա մօրուքով:

սպիտակ դեւ բացի Մազանդարանից երբեկիցէ ուրիշ տեղ հօ
չէր եղել:

Այն բացատրութիւնը որ ֆրանկները իրանք տուին, այն
էր թէ՛ դա ներկայացնում էր Գէորգ անունով մէկին—իրանց
սիրեցեալ իմամներէից մէկը, որը իբր թէ շարունակ զբաղուած
է հեռու պահելով մի կատաղի վիշապի՝ Անգլիան աւերելուց և
նրա թագաւորի վրայ յարձակուելուց. ուստի այդ մեծ և յա-
ւիտենական հրաշքի նմանութիւնը գործ էր ածուում որպէս մի
թալիսման բոլոր գրուածքների համար, և, մի խօսքով, ամեն
բանի համար՝ որ կապ ունէր արքայական գործերի հետ, և
այդ միջոցով էլ երկիրը պահուում էր ապահով վիճակում:

Ինչ և է, այս կնիքը մի քանի մետաքսէ թելերով փակ-
ցրուած լինելով նամակի ներքեւի մասին, շատ վիճաբանութեան
նիւթ դարձաւ մեծ վէզրի և անգլիական դեսպանի միջև: Ա-
ռաջինը պնդում էր, թէ դա ստորագրութեան նշան էր, իսկ
վերջինս ընդհակառակը պնդում էր թէ՛ այդպէս բան չէր կա-
րող լինել, որովհետեւ Անգլիայի թագաւորը աշխարհում իրան
հչ մի թագակիր գլխի ստորագրած չէր համարում:

Մենք պնդում էինք թէ մենք իրաւունք ունենք Շահի
կնիքը փակցնել նամակի հէնց ճակատին, սակայն դեսպանը
խիստ բարկութեամբ հակառակեց դրան, որովհետեւ նա իմա-
ցել էր որ այդ ձևը Պարսկաստանում գործադրւում էր մի ստո-
րագրասի վերսրերմամբ:

Մենք յետոյ առաջարկեցինք նամակի կողքին դրոշմել
կնիքը, բայց դրան էլ դեսպանը ընդդիմացաւ, որովհետեւ նա
առարկում էր թէ դա շատ մտերմութեան նշան կը համարուէր.
Նա յետոյ առաջարկեց որ կարելի կը լինէր կնիքը խփել մի ա-
ռանձին կտոր թղթի վրայ և հէնց այնպէս գետեղել նամակի
թերթի մէջ:

Մենք ուրախութեամբ համաձայնեցինք, որովհետեւ մինչ-
դեռ նա պնդում էր թէ այդ էր կնիքի իսկական տեղը, մենք
էլ մեր կողմից, եթէ ուզէինք, կարող էինք պնդել թէ դա այդ
տեղ լինելով նշանակում է թէ նամակի ճակատին պիտի փակ-
ցրուած լինէր:

Վերջապէս շարադրուեց նամակը, որ գեղազրութեան նը-
մոյշ համարուեց: Մոնշի ալ Մոմալէքը, պետական մեծ մոնշին,
ի գործ էր դրել իր բոլոր հանճարը, և ընտրել էր լեզուի այն-
պիսի ծաղիկներ՝ որոնք անտարակոյս մեծ հրճուանք կը պատ-
ճառէին, երբ նրանք ի ցոյց կը դրուէին հիւսիսի այն խաւար
և խոնաւ երկրներում: Նկատուեց, որ այն գեղեցիկ ակնար-
կութիւնը՝ որ պարունակում էր իր մէջ, այնքան դժուար

էր ըմբռնել, (ի հարկէ զժուար չէր լինի սուր մտքի համար) որ ոչ մի հասարակ մահկանացու չէր կարող կեղծել իբր թէ ինքը կատարելապէս հասկանում էր դրա միտքը:

Նա չեմ կարող ոյժ գործ դնել մտքիս վրայ, յիշելու համար ամբողջ նամակի բովանդակութիւնը, բայց դրա մէջ կար մէկ հատուած, որ հիացրեց ամբողջ ատենանին որպէս ճարտասանութեան ամենակատարեալ մի կտոր, և կրկնուեց բերանից բերան, որպէս կատարելութեան վազաթնակէտին հասած մի շարադրութիւն:

Այս էր այդ հատուածը:

«Երբ այն քուրաստանը—որտեղից հատընտիր քաղուել են սոյն նամակի անուշաբոյր ծաղիկները—կը թարմանայ և կը ոռոգուի Ձերդ մեծութեան բարեբախտութիւն ցոլացնող աչքերի շարժումից, և երբ նրանց անուշահոտութիւնը քաղցր ու ախորժիւի բոյրով կը բարձրանայ կը մտնի Ձեր իմացութեան ամենաներքին խորքերը, այդ բարեգուշակ, երջանիկ ըսպէին՝ տայ Ալլահը որ բազմած լինէք առողջութեան գահի վրայ և հանգստանալու լինէք լաւ կազմակերպուած ուղեղի ամպհովանու աակ:»

Արդ, թվէր կարող իր հասարակ խելքով երբեք ենթադրել, որ այդ բոլոր բառերով ասել էր կամեցուել թէ՛ «Մենք յոյս ունենք, որ այս նամակը լաւ առողջութեան մէջ կը գտնի Ձեր մեծութիւնը:»

Դեռ մի այլ զժուարութիւն էլ մնում էր. այդ այն էր, որ մի պատասխան ևս պիտի գրուէր այն նամակին, որ Անգլիական թագուհին գրել էր նրան՝ որին անգլիացիք մեր սովորութիւններին բոլորովին անծանօթ լինելով, կոչում էին «Իրանի թագուհի»: Այդ նամակի հետ միասին, անգլիացոց թագուհին ուղարկել էր իր պատկերը որպէս ընծայ, որի շուրջը զարդարուած էր ազամանդներով ու կախուած էր մի շրջաթայլից, որպէսզի Իրանի թագուհին կախէր իր վզից:

Արդ, թէպէտ Շահի աւագ կինը կոչւում է բանու հարէմ կամ հարէմի գլուխ, սակայն նա, մի խօսքով, որպէս թագուհի՝ համեմատուած անգլիական թագուհու հետ, այնքան տարբեր դիրք ունի իր տէրութեան մէջ՝ (գոնէ մենք այդպէս էինք տեսնում) ինչպէս, ասենք թէ, ախոռում կերակրի և կաթնի համար պահուած էգ գոմէշի դրութիւնը տարբեր է այն կովի դրութիւնից, որին հնդուն կերակրում ու պաշտում է, որպէս իր աստուծուն:

Ինչ և է, հարկաւոր էր նամակին պատասխանել: Պաշտօնական գրագրներից մի քանիսը փորձեր անելուց յետոյ, ի վերջոյ

նամակի գրելը յանձն առաւ մեծ մոնշին, որը այնքան մեծ աջողութեամբ էր գրել առաջին՝ այսինքն թագաւորի նամակը։ Եւ քանի որ այդպիսի թղթակցութիւնը նոր էր կայսրութեան մէջ, ես այստեղ կը տամ այդ նամակի պատճէնը, որպէս զի աշխարհը իմանայ, որ հանճարն ու իմաստութիւնը ծաղիկներ են՝ և իմ երկրի հողի առանձին սեփականութիւնը։

Նամակ Պարսկաստանի թագաւորի աւագ կնոջից՝ առ Անգլիայի թագուհին։

«Աղօթքներով այնքան մաքուր, ինչպէս սուտ ամբաստանութիւնից ազատուած Կոյս Մարիամի անբիծ զգեստը, և ողջոյններով՝ այնքան ճշմարիտ, ինչպէս այն վկայութիւնը որ Յիսուս տուեց իր մօր առաքինութեանը, մենք ողջունում ենք Ձեր մեծութիւնը, ով մեր սիրեցեալ քոյր, որի պալատը լուսափայլ է որպէս դրախտը, Դուք որ մարգարիտն էք իշխանութեան կեդէի, որ զեղեցիկ Աստղիկն էք մեծութեան երկնքում, որ զարդն էք Մեծն Բրիտանեայի, որ դարու ամենակատարնայն էք, մենք աղօթում ենք, որ քանի դեռ երկնային մարմինները քրիստոնէական եկեղեցու լուսափիւռ ջահերի նման լուսաւորում են երկնից խորքերը, և քանի դեռ Ջէմինին *) որ նմանում է խաչելութեանը, երևում է երկնքում՝ Ձեր գլխի վրայ լինի փառաց ամպհովանին։

«Մենք թոյլտուութիւն ենք խնդրում հաւաստիացնել Ձեր մեծութիւնը մեր անկեղծ սիրոյ մասին, և ծանօթացնելու Ձեզ որ մեր սիրեցեալ քրոջ՝ մուշկով ու յամպարով անուշահոտուած նամակը հասաւ մեզ մի երջանիկ ժամանակ՝ որպէս Գաբրիէլ հրեշտակի Աստուածային շնորհ պարգևող շունչը, և որպէս օրհնեալ Յիսուսի զօրացուցիչ շնչառութիւնը, և մեր սիրեցեալ քրոջ շունչը անուշահոտացրեց մեր խմբին և կերակրեց մեր զգայաւորները շուշանի արեցուցիչ բուրմամբը։

«Մինչդեռ Ձեր նամակի բազմազան, անման բովանդակութիւնը հաճոյացրեց մեզ՝ Ձեր մեծութեան բարեկամութեան հաւաստիքներով, մի և նոյն ժամանակ դրանք մեր երեւի քրոջ մտքի կատարելութեանց առհաւատչեայն եղան։

«Ալլահի օրհնութեամբ՝ երկու պետութիւնների մէջ եղած բարեկամութիւնը այնքան ամուր է, որ համաձայնութեան պարտիզում թափուած գրչի կաթիլները, և այդ պարտիզի ներդաշնակութեան և միաբանութեան ծաղիկները հրճում ու ժղատում են։

*) Ջէմինի՝ զոգիակ, որ դարնան նշան է համարւում։

«Դեռսպաններէ փոխանակութիւնից՝ բարեկամութեան դըռները բաց են արուած բոլոր կողմերից:

«Հարկաւոր է որ թղթակցութեան գրչի քաղցրանուագ սոխակները մի քանի երգեր դայլայլեն սիրոյ պարտիզում, և բացուին մեր խորհրդի կոկոնները ի կատարումս մի հաճելի պարտականութեան՝ որով շնորհակալութիւն ենք յայտնում մեր սիրեցեալ քրոջը՝ իր՝ մեզ ուղարկած ընծայի համար, որը սիրով ընդունեցինք, և որը մենք կախել ենք կատարելութեան վրից:

«Տայ Ալլահը որ Ձեր տունը—գթութեան և բարեկամութեան ընակարանը՝ միշտ բարգաւաճի:

«Բարեկամութեան պարտականութիւնները ցոյց են տալիս որ, հարկաւոր է երբեմն կաթիլներ ցօղել գրչի ամպից ճոխացնելու սիրոյ մարգի կանաչութիւնը:

«Տայ Ալլահը որ Ձեր մեծութեան փառքն ու պատիւը մշտնջենական լինի:»

ԳԼ. Ե.

Անգլիայի համար ընտրուած դեսպանն ու Հաջի Բաբան Ներկայանում են տիեզերքի կենդրոնին՝ հրաժեշտի հրաման ստանալու:

Այս նամակները, ինչպէս և Պարսկաստանի վէգիւրներից Անգլիայի նախարարներին ուղղուած մի քանի ուրիշները՝ որոնց մէջ մանրամասնութեամբ քննաբանուած էին երկու պետութիւնների գործերն ու շահերը՝ ժամանակին և ըստ պատշաճին գրուած ու անգլիական դեսպանին հաղորդուած լինելով՝ այժմ մնում էր միայն, որ Միրզա Ֆիրուզը մեկնելուց առաջ Ներկայանար արքայից-արքային, հրաժեշտի հրաման ստանալու համար:

Աստեղագէտներից խորհուրդ հարցրուեց, թէ որն էր ամենաբախտաւոր ժամը սկսելու այդպիսի մի մեծ գործ, որը անքան կարևոր էր թէ՛ նրան մասնակցող անհատների և թէ՛ այն պետութեան համար, որը շահագրգռուած էր նրանով: Ներանք որոշեցին Օմարի մահուան տարեդարձի օրը—մի օր՝ որ ցնծութեան է նուիրուած Ալիի հետևողների համար:

Մեր մեկնելու նախընթաց օրը, մեզ հրամայուեց հրաժեշտի ողջոյն մատուցանել Շահին. անգլիական դեսպանն էլ այդ առթիւ հրաւիրուեց Ներկայ լինելու:

Բաղդի ամեն մի շնորհը ստանալու դիտաւորութեամբ՝

Շահը վճռել էր այդ օրը, առաջին անգամ, նստել մի նորակա-
ռոյց դահլիճում, մի գործողութիւն, որ միշտ համարւում էր
որպէս բարեպարզե՛լ՝ կամ որպէս արտադրող բարեբախտու-
թեան:

Եւ այնտեղ՝ դէպի դահլիճը ուղղեցինք մեր քայլերը:

Նորին Մեծութիւնը նստած մի անկիւնում՝ հանգստանում
էր պետական մարգարտայեռ բարձի և թանկագին քարերով
զարդարուած գորգի վրայ: Մեծ վէզիւրը, արքունի գանձապահը
և պետական քարտուղարը կանգնած էին նրա առջև, Միրզա
Ֆիրուզը և ես (ի հարկ է ես նրա ետևից) մտանք բակը ու
պահ մի մեր կօշիկները հանած՝ աւազանի եզրին կանգնեցինք.
յետոյ, Միրզա Ֆիրուզին՝ որպէս առանձին շնորհաց նշան՝ հրա-
մայուեց մտնել սենեակը: Նա մտաւ և կանգնեց վէզրի կողքին,
իսկ ես անշարժ մնացի աւազանի մօտ, իմ տեղում:

Միրզա Ֆիրուզը հարկաւոր համարեց (և իսկապէս շատ
էլ պատշաճ էր այդպիսի դէպքում) իր դէմքի վրայ թախիժ ու
լքումն ցոյց տալ՝ իբր թէ չափազանց տրտում էր, որ շուտով
պիտի զրկուէր մեծ թագաւորի ամենաուրախ և կենդանաբար
ներկայութիւնից: Եւ մինչ նա կանգնած էր Նորին Մեծութեան
առաջ, աչքերը գետնին յառած, ձեռքերը առջևը պահած և մար-
մինը դէպի գետին խոնարհեցրած՝ նմանում էր աւելի մի ոճ-
րագործի, որ բերուել էր այնտեղ պատժուելու՝ քան մէկի՝ ու-
րին շուտով պիտի շնորհուէր աշխարհիս ամենամեծ ինքնակա-
լի ներկայացուցիչը դառնալու բարձր պատիւն ու աստի-
ճանը:

— Ինչո՞ւ ես այդպէս լքուած, հարցրեց Շահը: Վերջապէս
միթէ՞ դու չես վայելում քո թագաւորի շնորհն ու հաճու-
թիւնը:

— Բնի, բնի, բացազանչեցին երեք վէզիրները մի շնչով,
և մի և նոյն ժամանակ՝ Միրզա Ֆիրուզի աչքերը լցուեցին:

— Բնի, ասաց մեծ վէզիրը. երբ մարդ մի անգամ շա-
հում է արքայից-արքայի հաճութիւնը, միթէ՞ այլ ես ուրիշ բա-
նի կարիք կունենայ:

— Այդ ճշմարիտ է, ասաց Նորին Մեծութիւնը դառնալով
Միրզա Ֆիրուզին, դու շուտով նաւ պիտի նստես, ծով պիտի
գնաս, պիտի ապրես անհաւատների մէջ, սակայն յիշի՛ր որ,
այդ բանով՝ դու քեզ համար ապահովացնում ես Շահի հաւա-
նութիւնը, և յետոյ ինչալլան, երբ վերադառնաս՝ երեսդ մին-
չև յաւիտեան կը սպիտակի: ¹⁾ Դրանից աւելին էլ ի՞նչ ես ուզում:

¹⁾ Այսինքն մինչև կեանքիդ վերջը երեսդ պարզ կը մնայ: Մ. Թ.

— Ինչպա՛ւնհ, ինչպա՛ւնհ, արձագանգ տուին երեք վէզիւր-ները, և Միրզա Ֆիրուզն էլ ծնրադրութեամբ համբուրեց գետինը:

— Բացի դրանից, շարունակեց Շահը, ձայնը խնդութեան բարձրագոյն տոնին հասցնելով ու քաղցրութեամբ ժպտալով — Բացի դրանից՝ մտածիր, Միրզա Ֆիրուզ, թէ դու ի՞նչ զարմանալի բաներ ես շուտով տեսնելու: Փոխանակ ուղեղիդ կարողութիւնը կորցնելու, դու քեզ ամենաբախտաւոր մարդկանց մէկը պիտի համարես: Դու ահա գնում ես տեսնելու Ֆրանկըստանի ամենանշանաւոր գեղեցկուհիներին, դու կը տեսնես եղբօրս՝ Անգլիայի թագաւորի՝ կանանց երեսները, որոնք անշուշտ իր տէրութեան մէջ գտնուող գեղեցկուհիներէ զոհարներն են: Դու այնպիսի սքանչելիք կը տեսնես, որոնց նմանը դեռ ոչ մի պարսիկ չէ տեսել:

Շահի այս խօսքի վրայ, Միրզա Ֆիրուզն ընդհատեց իր լուրթիւնը և բացագանչեց.

— Արքայից-արքայի շնորհն երբէք չպակասի: Հազար տարի ապրի նա: Ես փոշուց էլ պակաս եմ, և պատրաստ եմ մոխիրով ծածկելու գլուխս, միայն թէ ես այնքան ապրեմ, որ սպիտակ երեսով վերադառնամ: Ես ամենայն յօժարութեամբ անձս կենթարկեմ ամեն տեսակ թշուառութեան—թշուառութիւններ՝ որ անհաւատները կարող են պատճառել ինձ: Ո՛ւմ շունն եմ ես, որ համարձակուեմ չհնազանդել արքայից-արքայի հրամանին: Ես միայն մէկ արգ (խնդիրք) ունեմ, մէկ խնդիրք միայն, որը թոյլտուութիւն եմ հայցում, մեկնելուցս առաջ դնել առ ոտն Ձեր Մեծութեան:

Այստեղ նա լռեց, սպասելով արքայական պատասխանին: Մի րոպէից յետոյ Շահը հրամայեց.

— Շարունակիր, ասա:

— Նուաստիս աղաչանքն այն է, որ ես ահա գնում եմ հանդիպելու մեծ ծովերի, փոթորիկների, ժայռերի, անդնդային հրէշների վտանգներին—վտանգներ՝ որոնց մասին ոչ մի պարսիկ չէ կարող առանց դողալու մտածել. այո, ես գնում եմ, բայց եթէ Ձեր Մեծութեան ստրուկների ամենափոքրագոյնն ու ամենաանշանը զոհ գնայ այդ վտանգներին՝ նա յոյս ունի որ իր տունը ¹⁾ կը շարունակի վայելել արքայից-արքայի պաշտպանութիւնը, նաև, իր միակ որդին, որ դեռ մանուկ է, միշտ

¹⁾ Երբ պարսիկը խօսում է իր «տան» մասին, դա նշանակում է իր կիներ կամ կանայքը:

նրա գահի ստուերի տակ կապրի: Ահա ան է նուաստիս աղերսանքը. ուրիշ չիլնէ չունեմ հայցելու:

— Բնի, Շահի գլուխը վկայ, ասաց մեծ արքան շատ ուրախ տրամադրութեամբ— բնի թող միտքդ անդորր լինի, միամիտ կաց. գլուխդ դիր վստահութեան բարձի վրայ, որովհետեւ քնէ էլ որ պատահելու լինի՝ դարձեալ ես թագաւոր եմ. քո որդին՝ մեր որդին կը լինի, և հէնց այսօրուանից, մինք նրան նշանակուած ենք իբրեւ մեր պաշտօնական ստրուկներէց մէկը, և երբ նա յարմար հասակին կը հասնի՝ կըսպասաւորի մեր անձին ու կը հսկի մեր պաշտօնութեան վրայ: Գնա, Միրզա Ֆիրուզ, գնա, բոլոր երկրներէդ հաւաքիր, մի կոյտ կազմիր և նրանց հրամայիր որ հանգչեն:

Արքայից-արքայի այս խրախուսիչ խօսքերի վրայ, Միրզա Ֆիրուզը ծունկ չորեց և ճակատը գետնին դիպցրեց. իսկ վէզիրները բացազանչեցին.

— Մաշալլահ, մաշալլահ:

Ապա ներկայացաւ անդլիական ղեսպանը, ընկերակցութեամբ մի երիտասարդ անհաւատի, որ նրա հետևորդներէց էր, և որը նշանակուել էր պարսից ղեսպանին ուղեկցելու ղէպի Անգլիա, որպէս թարգման և, հարկաւոր եղած դէպքում էլ՝ որպէս հիւրընկալ. նրանց թոյլ տրուեց մօտեւ այն յարկի տակ, ուր պատսպարուած էր աշխարհի ապաւէնը, և հրաւիրուեցին իրանց տեղը բռնել:

Երբ նրանք կատարեցին սովորական մեծարանաց ձևերը, այսինքն գլուխ իջեցնելն և այլն, Շահը ասաց.

— Խոշ ամէղիդ: ¹⁾ Ալլահի օրհնութեամբ, ղեսպան, սա մի բախտաւոր օր կը լինէր մեր երկու տէրութիւնների շահերի համար, որովհետեւ Շահը իր գորգը փռել է մի նոր տեղում, և նա յոյս ունի, որ այս գործողութիւնը ²⁾ բարեբախտութեամբ կը պսակի մեր ղեսպանութիւնը որ առաքուած է Անգլիա:

Այս խօսքի վրայ, անգլիական ղեսպանը գլուխ խոնարհեցրեց Շահին և ասաց, որ իր սրտագին աղօթքն էր, որ յաւիտեան հաստատ մնար ան բարեկամութիւնը՝ որ այժմ գոյութիւն ունէր Անգլիայի և Պարսկաստանի մէջ:

Ապա Շահն ասաց թէ ինքն յոյս ունէր որ, ան անձը, որին ինքն ընտրել էր որպէս ներկայացուցիչ՝ հաճելի կը լինէր անգլիական ազգին, և խնդրեց ղեսպանից յայտնել իր կա-

¹⁾ Բարի էք եկել:

Մ. Թ.

²⁾ Այսինքն նորակառոյց դահլիճում առաջին անգամ գորգ փռելն ու լրան նստելը:

Մ. Թ.

ռավարութեանը, որ նա (ներկայացուցիչը) մի մարդ է, որ վայելում է իր արքայական վստահութիւնը:

— Եւ, աւելացրեց, դուք հաճեցէք պաշտօնապէս ծանուցանել իմ եղբորը՝ Անգլիայի թագաւորին՝ որ ես նրան շնորհել եմ ամենամեծ պատիւը, որ մի պարսիկ կարող է վայելել: Այսօր ես նրան պարգևում եմ իմ անձնական ղզեստներէց մէկը: Այս վերջին խօսքն ասելով, նա մի նշան տուեց և մի ծառայ ներս բերեց զենջակի մէջ դրուած մի քաթէրի, ¹⁾ որը յաճախ շնորհազարդել էր արքայական մարմինը: Այդ քաթէրին իսկոյն փոխադրուեց Միրզա Ֆիրուզի ուսերի վրայ, որը մի անգամ ևս ծոնը կրկնեց և համբուրեց գետինը:

— Մորթարէք քաղ, ²⁾ ասացին վէզիւններն ու դեսպանը՝ շնորհաւորելով նրան:

Յետոյ Շահը դառնալով Անգլիական թագաւորի ներկայացուցչին՝ շատ քաղաքավարի կերպով հարցրեց թէ՛ արդեօք գոհացուցիչ էին այն ընտանեւոր, որ ընտրուած էին ուղարկուելու իր արքայի պալատը: Այս հարցին դեսպանը մի շատ հաճոյացուցիչ պատասխան տալով՝ աւելացրեց թէ՛ միայն մէկ բան էր պակսում լրացնելու այդ ընծաները, այսինքն արքայից-արքայի պատկերը, որպէսզի Անգլիայի ժողովուրդը կարողանար մի գաղափար կազմել նրա անձի գեղեցկութեան՝ ինչպէս և նրա վեհ պատուարժանութեան մասին, որպէս վեհապետի:

Շահը հաճեցաւ մի պատշաճ պատասխան տալ ասելով՝ թէ ինքն անհոգ չէր եղել դեսպանի ցանկութիւնների այդ մասի վերաբերմամբ, որովհետեւ իր նկարչապետին արդէն հրամայել էր պատրաստել մի պատկեր, որը ներկայացնէր ինչ միայն իրան, այլ և արքայորդիներին— իր որդիներին, և թէ ինքը լիայոյս էր, որ իր Անգլիայի եղբայրը կընդունէր այդ պատկերը, որպէս նշան մասնաւոր բարեկամութեան:

Ապա նկարչապետին հրամայուեց ներկայացնել պատկերը, որը իսկապէս արուեստի մեծ և անմահ ճիգերի արդիւնք էր: Դա ներկայացնում էր Շահին որսորդութեան ժամանակ՝ ճիշտ այն կէտին՝ երբ նա թագը գլխին, պետական գոհարները վրան, փառաւոր բազպանները թևերին կապած՝ իր սրարշաւ ձիու վրայ նստած՝ նիզակով ծակում էր մի այծեամի մարմինը:

Նկարչապետն անզուգական հանճարով և հնարագիտութեամբ ներկայացրել էր Շահի որդիներից միայն քառասունին,

¹⁾ Մուշտակով վերարկու:

Մ. Թ.

²⁾ Շնորհաւոր լինի, բարեբախտ լինիս:

Մ. Թ.

որոնք կարծես թէ աստղեր լինէին, որ երկնքում բոցավառոււմ էին, առանձին-առանձին, համաստեղական խմբերով. սակայն տեղի սղութեան պատճառով՝ նա չէր կարողացել միւս որդիներին էլ ներկայացնել:

Պատկերը բաւական ժամանակ ի ցոյց դրուելուց և հիացման առարկայ դառնալուց յետոյ, կլոր փաթոյթ արուեց և պատրաստուեց ուղարկուելու:

Խուժքն արձակուելու վրայ էր, երբ Շահը պահեց անգլիական դեսպանին, և պալատական բանաստեղծի ետեից մարդ ուղարկելով՝ ասաց.

Մենք տփուալին մի ուրիշ բան էլ ունենք ցոյց տալու— մի լան՝ որ բարեկամութեան նշան պիտի լինի Անգլիայի և Պարսկաստանի թագաւորների միջև: Ձեր միջոցով, հվ դեսպան, Շահը ստացել է մի արկղիկ, որի կափարիղի վրայ ձեր ծերունի արքան, որովհետեւ մենք նկատել ենք որ նրա մագերն սպիտակ են, ¹⁾ իր պատկերը նկարել է տուել: Մենք հաւատարմութեամբ պահել ենք այդ ընծան և ըստ արժանոյն սիրում ենք դրան: Արդ, որպէս փոխարինութիւն՝ մենք պատրաստել ենք տուել այս չնչին բանը:

Եւ նա մի և նոյն ժամանակ իր բարձի տակից հանեց կիտուածանկար, տարօրինակ կերպով ներկուած մի գրպանի հայելի, որի ծածկիչի վրայ նկարուած էր իր պատկերը շատ փոքրիկ դիրքով:

—Երբ եղբայրս իր անձը տեսնելու համար կը նայի այս հայելու մէջ, ասաց. թագաւորների թագաւորը, նա մի և նոյն ժամանակ կը տեսնի և՛ մեր պատկերը, և այդպէս՝ երկու վեհապետների գլուխները միաժամանակ կանդրադառնան նրա մէջ: Այդ բանը, այդ միտքը լուսաբանալու համար՝ մենք հրամայել ենք յօրինել այն տաղը, որ մակագրուած է շրջանակի երեսին:

Այս ասելով, նա հրամայեց Ասքէր խանին—մնալէր էլ շաւրան ²⁾ որ այդ ժամանակ ներկայացել էլ արդէն, բարձրաձայն կարդալ հայելու հակառակ ծածկիչի վրայի գրուածքը: Նա կոկորդը մաքրելով և մօրուքը շոյելով երգեց հետեւեալը.

«Գնան, նախանձեղի հայելի, դնան,

Ուր բախտդ կանչում է քեզ.

¹⁾ Այստեղ տկնարկուած պատկերը Գէորգ III-ին էր, որի մագերի վրայ սպիտակ փռչի էր ցանուած:

²⁾ Բանաստեղծների իշխան:

Մ. Թ.

Գնահ, դու թողնում ես մէկ Ղէյսարի ¹⁾ ներկայութիւնը՝
Ստանալու մի ուրիշինը:
Բայց դու տանում ես քո մէջ՝ վեհիդ պատկերը,
եւ երբ քեզ կրկին բաց կանի Բրիտանեայի արքան՝
Դու կանդրադարձես ոչ թէ մէկ Ղէյսար՝ այլ երկու:
Ոչ թէ մէկ եղբայր, այլ երկու եղբայր,
Ո՛չ թէ մէկ Ջէմշիդ՝ այլ երկու Ջէմշիդ,
Ո՛չ թէ մէկ Դարաբ՝ այլ երկու Դարաբ:
Եւ ինչպէս որ երկու Ղէյսարներ մէկ կը դառնան,
Այնպէս էլ անգլիացիներն ու պարսիկները մէկ ազգ կը
դառնան,

Մէկի բարեկամները կը դառնան միւսի բարեկամները,
Եւ մէկի կամ միւսի թշնամիները՝ երկուսի թշնամիները:
Գնահ, նախանձելի հայելի, գնահ,
Ուր բախտդ կանչում է քեզ:
Գնահ, թող քո վեհի ներկայութիւնը՝
Վայելելու նրա եղբոր ներկայութիւնը:»
Խուժըրը, ինչպէս երեաց, սքանչացաւ այս բանաստեղծու-
թեան գեղեցկութեան՝ և բանաստեղծի հանճարի ու հնարագի-
տութեան վրայ:

Անգլիական դեսպանը հաւաստիացրեց Շահին, որ իր թա-
գաւորը ամենամեծ բաւականութեամբ կընդունէր այդ հայելին
և անշուշտ կը նայէր դրա մէջ գտնէ օրը մէկ անգամ: Վէզիր-
ներն ու Միրզա Ֆիրուզն էլ գովաբանեցին իրանց թագաւոր-
տիրոջ իմաստութիւնը, որով նա այդպիսի մի անստղծութեան հը-
նարք էր գտել բարեկամութեան կապով միացնել երկու ազ-
գերին, ու այնքան իրար մօտեցնելու նրանց թագաւորներին:

Ամբողջ այդ ժամանակը՝ ես կանգնած էի մնացել աւա-
զանի մօտ և Շահը չէր հաճել ուշադրութիւն դարձնել վրաս:
Բայց երբ նա արձակեց Միրզա Ֆիրուզին, և իր ուշադրութիւ-
նը դարձրին վրաս, որպէս մէկի՝ որը ուղեկցելու էր դեսպա-
նին գէպի Անգլիա, նա բարձրաձայն բացազանչելով (մինչդեռ
ես համբուրում էի գետինը) ասաց.

— Գնահ, լաւ ծառայութիւն արաւ. խիստ աշխատիր որ օ-
տար երկրում սպիտակացնես Շահիդ երեսը: Բաց արա իմա-
ցութիւնդ և օգտակար բաներ սովորիր: Շահը սպասում է, որ
վերադարձիդ դու սովորած լինիս բոլոր ֆրանկների լեզուները,
որպէս զի կարողանաս թարգմանել նրանց բոլոր գրքերը, և

1) Կայսր: մինչև այսօր էլ դեռ Պարսկաստանում թիւրքերի Սուլթանը
յայտնի է Ղէյսար է Բում՝ անունով, որ նշանակում է Հռովմի Կայսր:

մեզ ծանօթացնես թէ՛ այդ անծանօթ վայրերում բնակուող անհաւատները ինչ աստղի ներքոյ են քաշում կեանքի շունչը Գնան, և երբ դու կը կատարես այդ պատուէրները՝ կարժանանաս արքայից-արքայի քաղցր նայուածքին:

Հազիւ այնքան միայն կարողութիւն ֆնաց վրաս, որ կարողացայ թոթովել՝ ըէ շաշմամ (աչքիս վրայ), որովհետեւ Շահի գթութիւնն ու քաղցրութիւնը խիստ վեժ ազդեցութիւն ունեցաւ վրաս: Եւ հէնց որ Միրզա Ֆիրուզը մօտս հասաւ, իսկոյն վերցրինք մեր կօշիկները, հագանք, վերադարձանք այնտեղ՝ որտեղից եկել էինք, և սկսեցինք պատրաստուել անմիջապէս մեկնելու:

Բայց որքան էլ որ ես ինձ բարձրացած էի զգում Շահի թովիչ խօսքերի ազդեցութեան տակ, այնուամենայնիւ տակաւին գերադասում էի փարել իրականութիւններին. ուստի արեւը մայր մտնելիս, ես դուրս ծլկուեցի, քաղաքից դուրս գնացի, քայլերս ուղղեցի դէպի գերեզմանանոցը՝ տարաբախտ Զննաբի գերեզմանի մօտ, որտեղ թաղեցի թումաններով լի մի ծանր քօակ:

«Գոնէ, մենախօսեցի ես, աշխարհում մէկ կտոր գետին կը գտնուի, որի վրայ կարող կը լինիմ հետաքրքրութեամբ ու սիրով մտածել:»

Գլ. Գ.

Պարսից դեսպանութիւնը մեկնում է Թէհրանից:—Նեսպանի մենախօսութիւնը:—Հացի Բարան ցոյց է տալիս թէ ինքն ինչպէս լաւ կարողանում է իրան հաճելի ու սիրելի դարձնել:

Անգլիա ուղևորուող դեսպանութիւնը բաղկացած էր հետևեալ անձերից:

Միրզա Ֆիրուզ՝	Դեսպան
Միրզա Հաջի Բաբա՝	Ատենադպիր
Մոհամէդ բէգ՝	Արարողպետ
Իսմայիլ բէգ՝	Նաղիր (տնտես)
Ազա բէգ՝	Ախոռապետ
Հաշէմ՝	Փիշ խէղմաթ (արքանեակ)
Արբաս բէգ՝	Ջէլովդար (ձիապանապետ)
Հոսէյն բէգ՝	»
Թաղի՝	Ֆէրաշ (գորգ փողոյ)
Սադեղ՝	Սուրհանդակ